ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ, Հայկական հարցը, բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը

Երևան, Համազգային հայ կրթական և մշակութային միություն, 1995, 100 էջ

Գրքույկի ներածականում հեղինակը անդրադառնում է Հայկական հարցի ծագումնաբանությանը, նշելով, որ Հայկական հարցը լոկ հայենիքի ազատագրման պահանջ չէ, այլ նաև «ազգային գոյապահպանության, հայենիքի գաղափար»: Բացահայտելով Հայկական հարցի բովանդակությունը, նշելով այդ խնդրում տարակարծությունների առկայությունը հեղինակը, մասնավորապես, եզրակացնում է. «Հայկական հարցը հայ ժողովրդի ազատագրության, իր պատմական հայրենիքում անկախ պետականության վերականգնման խնդիրն է»: Տարակարծություններ կան նաև հարցի ծագումնաբանության վերաբերյալ: Ըստ Խուրշուդյանի Հայկական հարցը ծագել է 1375 թվականից անմիջապես հետո, երբ եգիպտական զորքերը գրավեցին Սիսը և կործանեցին Կիլիկիայի հայկական պետությունը: Այնուհետև տալով Հայկական հարցի պատմության համառոտ ուրվագիծը, հեղինակն այն բաժանում է չորս հիմնական փուլերի:

Հայկական հարցի ծագման ու զարգացման առաջին փուլը հեղինակը համարում է 1375-ից մինչև XVII դարի կեսերն ընկած ժամանակաշրջանը: Այս փուլում է, որ Հայկական հարցը խոր արմատներ է արձակում հայ ժողովրդի հավաքական գիտակցության մեջ, ծնունդ է առնում ազատագրական լեգենդը, որը հայ-

ռենիքի ազատագրության գաղափարը կապում է Արևմուտքի տերությունների հետ:

Երկրորդ փուլը հեղինակը համարում է Հայկական հարցի մուտքը Եվրոպա և Ռուսաստան XVII դարի կեսերից մինչև Սան-Ստեֆանո և Բեռլինի կոնգրեսը: Այս փուլի բնորոշ հատկանիշն ազատագրական պայքարի զարթոնքն ու վերելքն է: Տվյալ ժամանակաշրջանում է մշակվում ազգային պայքարի գաղափարախոսությունը, ազգային-ազատագրական շարժումն իր շրջանակի մեջ է առնում և Արևմտահայաստանը, և Արևելահայաստանը:

Երրորդ փուլը Հայկական հարցի միջազգայնացումն է, որի սկիզբը կապվում է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետ, երբ Սան-Ստեֆանոյում և Բեռլինի կոնգրեսում Հայկական հարցը մտնում է միջազգային պայմանագրերի մեջ: Հեղինակը վերաշարադրելով Սան-Ստեֆանոյի պայմանագրի բովանդակությունը, նրա չիրագործման պատճառը համարում է արևմուտքի պետությունների և Ռուսաստանի շահերի բախումը:

Գրքույկում քննության է առնվել նաև Հայկական հարցի թուրքական հայեցակետը, ներկայացվել՝ պանօսմանիզմի գաղափարախոսության էությունը: Հայտնի է, որ երիտթուրքերը, անցնելով իշխանության գլուխ (1908 թ.), սկզբում որդեգրեցին պանօսմանիզմի, ապա և՝ պանթուրանիզմի գաղափարախոսությունը, որոնց նպատակն էր Ադրիականից մինչև Չինաստան ընկած տարածքներում միավորել բոլոր թրքալեզու ժողովուրդներին:

Հեղինակը այնուհետև նշում է այն հիմնական փուլերը, ըստ որոնց թուրքերը ծրագրել էին հասնել իրենց նպատակին.

ա) Բոլոր ոչ թուրք ժողովուրդների թրքացումը կամ ֆիզիկապես ոչնչացումը:

բ) Օղուզական պետության, այսպես կոչված, Օղուզիստանի ստեղծումը թուրքմեն ցեղերի միավորումով:

գ) Պանթուրանիզմի (պանթուրքիզմի) գաղափարախոսության վերջնական հաղթանակը՝ միացյալ և անկախ Թուրանի ստեղծումը Միջերկրականից մինչև Խաղաղ օվկիանոս, Չինաստանից մինչև Հյուսիսային օվկիանոս:

Հայաստանը սեպ էր այս ճանապարհին, և հայ ժողովրդի ոչնչացումը համարվում էր թուրք պետության հիմնական խնդիրը:

«Պանթուրքիզմի մահացու վտանգը եղել է, կա և լինելու է մշտա-

պես»,- արձանագրում է հեղինակը և հենց դրա մեջ էլ տեսնում է հայերի ցեղասպանության շարժառիթը:

Այնուհետև Լ.Խուրշուդյանն անդրադառնում է 1910-1911 թթ. Սալոնիկում թուրք ղեկավարների կողմից ընդունված գաղտնի որոշումներին, որոնցով ծրագրված էր առաջին հերթին հայերի ոչնչացումը, որը և Գերմանիայի լռին աջակցությամբ իրականացրեցին թուրքերը, օգտվելով պատեհ առիթից պատերազմական դրությունից:

Ըստ Լ.Խուրշուդյանի հայերի ցեղասպանությամբ ավարտվեց պանթուրանիզմի գաղափարախոսության ծրագրի իրականացման առաջին փուլը, ամայացավ Արևմտահայաստանը: Թուրքերը նպատակ ունեին ամայացնել նաև Արևելահայաստանը, Ղարաբաղը, Զանգեզուրը, թողնել հայոց հողն առանց հայի: Սակայն թուրքերի ծրագրերի իրականացմանը խոչընդոտեց այն հանգամանքը, որ ռուսական զորքերի գրաված Արևմտահայաստանի գրեթե ողջ տարածքը, ձեռք բերված պայմանավորվածությամբ, բաժանվեց Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև: Այսուհանդերձ օսմանյան պետությունը կանգնած էր կործանման եզրին, և միայն «հրաշքը» կարող էր փրկել թուրքական պետականությանը: Այդ «հրաշքը», հեղինակի կարծիքով, Ռուսաստանում բոլշևիկների իշխանության գլուխ անցնելու փաստն էր: Բրեստ-Լիտովսկի ամոթալի պայմանագրով հայկական տարածքները կրկին հանձնվեցին թուրքերին: Օգտվելով պատեհ առիթից թուրքական զորքը 1918-ի հունվարին հրաման ստացավ գրավել Հայաստանը: Ռուսական զորքերը լքեցին Հայաստանը, հեշտացնելով թուրքերի առաջխաղացումը: Սակայն թշնամուն դիմագրավեց հոշոտված, արյունաքամ ժողովուրդը, որը և Սարդարապատի ճակատամարտում ձախողեց թուրքական զավթողական ծրագրի իրականացումը: Հռչակվեց Հայաստանի անկախ Հանրապետությունը:

Հեղինակը, շարադրելով Հայկական հարցի հետ կապված հետագա իրադարձությունները, անդրադառնում է ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնի միջնորդության խնդրին: Ըստ վերջին սահմանագծման Հայաստանի տարածքը կազմում էր 161.330 քառ./կմ: Սևրի պայմանագրով (1920 թ. օգոստոս) Արևմուտքը պաշտոնապես ճանաչեց Հայաստանի անկախ Հանրապետության գոյության փաստը, մինչև այդ ճանաչել էր նաև Խորհրդային Ռուսաստանը, և, փաստորեն, ամբողջ աշխարհը փաստեց Հայկական հանրապետության գոյության իրողությունը: Թվում էր, թե լուծված է Հայկական հարցը: Բայց ահա բոլշևիկյան Ռուսաստանի

ղեկավարների լռին համաձայնությամբ թուրքերը հարձակվում են Հայաստանի վրա, մյուս կողմից՝ Հայաստան է մտնում ռուսական զորքը: Հայաստանը բաժանվում է Ռուսաստանի և Թուրքիայի միջև, որն իր ձևակերպումն է ստանում 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրով: Լոզանի պայմանագրով (1923 թ.), փաստորեն, Հայկական հարցը փակվում է: Արևելյան Հայաստանը ներկայիս տարածքով (30000 քառ. կմ) մտնում է ԽՍՀՄ-ի կազմի մեջ: Հեղինակի կարծիքով թեև Խորհրդային Հայաստանը զարգանալու հնարավորություն է ստանում, «սակայն քաղաքական առումով Խորհրդային Միությունը մարդու և ժողովուրդների բանտ էր: Այդ քաղաքականության ծանր հետևանքները, բնականաբար, Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների հետ միասին, կիսում էր նաև հայ ժողովուրդը»:

Այսուհանդերձ, ըստ հեղինակի եզրակացության, հայ ժողովրդի ճակատագիրը միշտ կապված պիտի մնա Ռուսաստանի հետ:

Խորհրդային տարիներին Հայաստանը միջազգային հարաբերություններում չունենալով պետական ֆունկցիա, չէր կարող արծածել կամ բարձրացնել Հայկական հարցը, մանավանդ որ Խորհրդային Միության ղեկավարները քանիցս հայտարարել էին, որ իրենք հողային պահանջ չունեն Թուրքիայից: Ի հետևանք դրա Հայկական հարցը Խորհրդային Հայաստանում հանվեց օրակարգից՝ մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը:

Քննության առնելով «սփյուռքահայությունը և Հայկական հարցը» խնդիրը, հեղինակը նշում է. «Քանի որ Խորհրդային Հայաստանը ստիպված էր լռել, հետևաբար Հայկական հարցի պայքարի դրոշը պետք է բարձրացնեին սփյուռքահայերը: Գրվեցին գրքեր, հրապարակվեցին արխիվային նյութեր, առանձին հոդվածներ հայ և օտարալեզու մամուլում, դիմումներ ուղարկվեցին մեծ տերությունների ղեկավարներին: 1972 թ. ստեղծվեց Ամերիկայի հայկական համագումարը, որի դերը շատ շոշափելի է այսօր էլ: Այս ամենին զուգահեռ, իբրև ազգային-ազատագրական պայքարի մարտավարության նոր ձև, կյանք մտավ ահաբեկչությունը թուրք դիվանագետների դեմ տարբեր երկրներում: Ահաբեկչությունը որքան էլ անընդունելի ձև է քաղաքակիրթ աշխարհում, հայության պարագային ուներ իր արդարացումը՝ բացել համաշխարհային հանրության աչքերը թուրքերի գործած ոճիրների վրա, գրավել նրա ուշադրությունը»:

Խոսելով Հայաստանի ազատագրության Հայ գաղտնի բանակի և նմանատիպ այլ կազմակերպությունների գործունեության մասին, հե-

ղինակը նշում է, որ նրանց նպատակը մեկն էր՝ ազատել Արևմտահայաստանի տարածքը թուրքերից, Ղարաբաղն ու Նախիջևանը՝ Ադրբեջանից և միացնել Հայաստանին: «Մենք այժմ որոշել ենք պայթեցնել Հայկական հարցի շուրջ ստեղծված լռության շենքը, թող մենք մնանք փլատակների տակ: Անձնասպանություն չէ այս, ոչ էլ խելագարություն, այլ մեր զոհողությունը ազատության Բագինին»,- ասված է «Հայկական ցեղասպանության Արդարության մարտիկներ» կազմակերպության կոչում:

Ինչպես նշում է հեղինակը, փաստորեն «ահաբեկչությունը մոռացության գրկից հանեց Հայկական հարցը, որով սկսեցին զբաղվել միջազգային կազմակերպությունները՝ հակառակ Թուրքիայի դիմադրությանը»:

Հեղինակը հիշատակում է 1973 և 1985 թթ. ժնևում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովների որոշումները, մասնավորապես որոշման այն կետը, որտեղ հայերի 1915-1916 թթ. կոտորածները որակված են իբրև առաջին ցեղասպանություն: Ամբողջովին մեջբերվում է եվրոպական պառլամենտի 1987 թ. բանաձևը:

«Հայաստանի երկրորդ Հանրապետությունը և Հայկական հարցը» բաժնում հեղինակը ներկայացրել է 1988-ի փետրվարից սկսած իրադարձությունները, որոնք «Ղարաբաղյան շարժում» անունով գրանցված են պատմության մատյանում: Հայաստանը հռչակվեց անկախ պետություն, սակայն, ըստ հեղինակի, «հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման և Հայոց համազգային շարժում կազմակերպության ո՛չ տակտիկական, ո՛չ էլ ստրատեգական խնդիրները Հայկական հարցում չէին համընկնում»: «Հայ ժողովրդի՝ Ռուսաստանի օգնությամբ թուրքական եղեռնից փրկվելու, ֆիզիկական գոյությունը պահպանելու իրատես քաղաքականությունը հայտարարվեց «համաժողովրդական քծնանք», իսկ պանթուրքիզմը՝ «քաղաքական ուժը կորցրած գաղափարախոսություն»: Չկատարվեց իր իսկ՝ ՀՀՇ-ի «... առաջ քաշած պահանջը՝ Հայկական ցեղասպանությունը ճանաչելու պահանջով ՄԱԿ-ին դիմելու մասին... Պատմագիտությունը հայտարարվեց կեղծ գիտություն, «ազգային գաղափարախոսությունը» և «ազգային համերաշխությունը»՝ կեղծ քաղաքական կատեգորիաներ: Սնանկ համարվեց հայոց ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը, մասնավորապես հայերի ռուսական կողմնորոշումը: Հարց դրվեց հայոց վերջին 300 տարվա պատմությունը վերանայելու մասին»:

«Հայ ժողովրուրդը,- գրում է հեղինակը,- նման քաղաքականություն ընդունել չի կարող»: